ԱՆԱՏՈԼԻ ՅԱԿՈԲՍՈՆ

Հայ ճարտարապետության եվիրյալը

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Մ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հայ ճարտարապետության օտարազգի հետազոտողների շարքում իր բազմաշխատ գիտահետազոտական գործունեությամբ Անատոլի Յակոբսոնը գրավում է առանձնահատուկ տեղ, ինչը նրան գիտական շրջանակներում բերել է գնահատում և լայն ճանաչում։

Անատոլի Յակոբսոնը ծնվել է 1906 թվականի օգոստոսի 22-ին, Սանկտ Պետերբուրգի նահանգի Լուգա քաղաքում, անտառապահ Լեոպոլդի ընտանիքում։ Նա իր բարձրագույն կրթությունը ստացել է Ս. Պետերբուրգում, 1929 թ. ավարտել է համալսարանի լեզվագիտության և նյութական մշակույթի պատմության ֆակուլտետը։ 1930 թ. որպես կրտսեր գիտական աշխատակից սկսել է պաշտոնավարել Ս. Պետերբուրգի նյութական մշակույթի պատմության ակադեմիայում (հետագայում վերանվանված ՍՍՀՄ ԳԱ նյութական մշակույթի պատմության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունք)։ Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան է հայցել 1941 թ.։ Հայրենական պատերազմի սկզբից մնացել է պաշարված Լենինգրադում, մասնակցել նրա հերոսական պաշտպանությանը։ 1942 թ. փետրվարին ծանր հիվանդ Ա. Յակոբսոնը փոխադրվել է Իվանովո քաղաքը։ Ապաքինվելուց հետո կարճատև աշխատել է վերոհիշյալ ինստիտուտի Մոսկվայի բաժանմունքում, ապա՝ 1945 թ. ապրիլին փոխադրվել է Լենինգրադ ու շարունակել աշխատանքն իր հարազատ գիտական օջախում։

Ա. Յակոբսոնը մասնագիտությամբ հնագետ էր։ Որպես այդպիսին նա մասնակցել է Խերսոնեսում, Հայաստանում և Ադրբեջանում կազմակերպված հնագիտական արշավներին, որոնց ընթացքում հմտացել է, կուտակել մեծ փորձ։ 1961 թ. նրան շնորհվում է պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան՝ պաշտպանության ներկայացրած «Միջնադարյան Խերսոնես» մենագրության համար։

Գիտական հիմնավոր դպրոցի բովով անցնելը, խորը պատրաստությունը, բացառիկ աշխատասիրությունը, գիտական լայն աղբյուրների (նաև օտար լեզուներով) տիրապետումը, բարերար հիմք ծառայեցին նրա ընդգրկուն, անդուլ ջանքերով ձեռք բերված գիտական վաստակի համար։

Նա պատկանում էր արևելագիտության, կովկասագիտության և հայագիտության Նիկողայոս Մառի և Հովսեփ Օրբելու նշանավոր դպրոցին։ Նրանց անմիջական ազդեցությամբ ու հովանավորությամբ Ա. Յակոբսոնն իր գիտական հետաքրքրությունների ոլորտում ներգրավեց Անդրկովկասը, մասնավորապես՝ Հայաստանը։ Նա անդադրում ուղևորություններ էր կատարում դեպի հուշարձանները, ուսումնասիրում, լուսանկարում և չափագրում էր (երկուսին էլ տիրապետելով անթերի), կուտակում փաստական հարուստ նյութ, որը պստվանդան դարձավ նրա հիմնարար հետազոտությունների համար։

Յակոբսոնի գիտական բազմահարուստ ժառանգությունը երկճյուղ է՝ հնագիտություն և ճարտարապետություն։ Առաջինը հիմնականում ընդգրկել է Սև ծովի հյուսիսային ափերը (Խերսոնես, Ղրիմի թերակղզի) և մասամբ՝ Ադրբեջան (Օրեն-կալա)։ Այդ թեմաներով նա հրատարակել է բազմաթիվ հոդվածներ, նաև «Միջնադարյան Խերսոնես» մենագրությունը (1959 թ.)։ Դեռևս Խերսոնեսի պեղումներին մասնակցելիս 1946 թ. հրատարակած մի հոդվածով նա զուգահեռներ է հայտնաբերել միջնադարյան Խերսոնեսի և հայկական (Անի, Ամբերդ, Տաթև) բաղնիքների միջև։ Նույն տարիներին նա կարողացել

է ժամանակ տրամադրել ուսումնասիրելու համար Ղրիմի թերակղզու հայկական հուշարձանները, որի արդյունքները ամփոփել է 1959 թ. հրատարակած իր «Հայկական ճարտարապետությունը Ղրիմում» ծավալուն աշխատության մեջ։

1929 և 1936 թթ. Ա. Յակոբսոնը Հայաստան է ժամանել, մասնակցելով ակադեմիկոս Հ. Օրբելու գլխավորած հնագիտական արշավախմբի աշխատանքներին։ Դրանցից ավելի տևականը երկրորդն էր, երբ արշավախումբը զբաղվեց Ամբերդ ամրոցի պեղումներով։ Հայաստան աշխարհն իր հնագույն և միջնադարյան քաղաքակրթության բազմաժալ մշակույթով, ճարտարապետական հազարավոր հոյակերտումներով այնպես հրապուրեց Ա. Յակոբսոնին, որ նա այնուհետև մշտապես կապված մնաց Հայաստանի հետ, դարձավ նրա ճարտարապետության և արվեստի նվիրյալ հետազոտողն ու մեկնաբանը։ Կրկնակի այցելությունները Հայաստան (1946, 1947) իրենց անդրադարձն ունեցան։ 1946 թ. նա հրատարակում է մի ամփոփ հոդված Տեղերի վանքի մասին, իսկ հաջորդ տարին հանդես է գալիս Տաթևի վանքի ճարտարապետական համալիրին նվիրված ընդարձակ հոդվածով։ Դրանցով նա հիմք է դնում Հայաստանի վանքային համալիրների ճարտարապետության ուսումնասիրության շարքին։ Հետզհետե լույս են տեսնում հոդվածներ Խորակերտի և Մշկավանքի (1951 թ.), Հաղարծնի, Սաղմոսավանքի և Նոր Գետիկի (1952 թ.), Դանձասարի վանքի (1960 թ.) և Բյուրականի եկեղեցիների (1971 թ.) մասին։ Ցուցաբերելով բացառիկ խորաթափանցություն և ուշադիր օգտագործելով մատենագրական ու վիմագրական տվյալները, հեղինակը վերոհիշյալ աշխատություններում ուրվագծում է վանքային համալիրների առաջացման ու աստիճանական զարգացման պատկերը, նշում երևան եկած ոճական նոր առանձնահատկությունները, կատարում գեղարվեստական վերլուծություններ։

Հայկական ճարտարապետությանը նվիրված նրա առավել ծավալուն աշխատությունը 1950 թ. լույս տեսած «Ակնարկ Հայաստանի V—XVII դդ. հայ ճարտարապետության» մենագրությունն է։ Ն. Տոկարսկու «Հին Հայաստանի ճարտարապետությունը» (1946 թ.) գրքից հետո փաստորեն երկրորդ, ընդհանուր առմամբ համարձակ փորձն էր միջնադարյան հայ ճարտարապետության զարգացման ամբողջական պատմությունը շարադրելու ուղղությամբ։ Թեև Ա. Յակոբսոնի այս մենագրությունը, ինչպես Ն. Տոկարսկու վերը նշված գիրքը (որը նա բարեփոխելուց հետո վերստին հրատարակեց 1960 թ.), զերծ չէր նույն կարգի թերություններից, սակայն դրանք անխուսափելի են, երբ առաջին փորձն է կատարվում, ճանապարհ հարթելով ավելի կատարյալին հասնելու համար։

Ա. Յակոբսոնի գիտական տեսադաշտում մշտապես գտնվել են տարբեր երկրների ճարտարապետությունների միջև գոյություն ունեցող ընդհանրացումների և հետազոտման պրոբլեմները, որոնց նվիրված է նրա հոդվածների շարքը։ Դրանցից հիշատակելի են «Վաղ միջնադարյան բուլղարական ճարտարապետության հայկական զուգահեռները» (1968 թ.), «Հայ-վրացական ճարտարապետության փոխհարաբերությունները» (1970 թ., ֆրանսերեն՝ 1971 թթ.) «Բալկանների, Արևելյան Եվրոպայի, Անդրկովկասի և Միջին Ասիայի միջնադարյան ճարտարապետության մի քանի օրինաչափությունների առանձնահատկությունները» (1972 թ.), «Հայաստանի և Բյուզանդիայի վաղ միջնադարյան ճարտարապետության առնչությունները» (1973 թ.), «Հայաստան և Սիրիա. ճարտարապետական համադրումներ» (1976 թ.), «Կովկասյան Աղվանքի և Հայաստանի ճարտարապետության կապերը» (1977 թ.), «Կովկաս և Բյուզանդիա» (1982 թ.), «Հայկական միջնադարյան ճարտարապետության թեմաներով սելջուկյան արձագանքները» (1983 թ.) և այլն։

Անդրադառնանք դրանցից մի քանիսում առաջ քաշված տեսական եզրահանգումներին։ Նշելով Սիրիայի և Հայաստանի վաղ միջնադարյան ճարտարապետության ընդհանրությունները, Ա. Յակոբսոնը դրանց պատճառները բացատրում է բնական պայմանների, նույն շինանյութի (տուֆ, բազալտ), դրանց օգտագործման տեխնիկական միջոցների և կառուցումներ կատարելու

սոցիալական պայմանների ընդհանրությաբ։ Հայ-վրացական միջնադարյան ճարտարապետության փոխհարաբերության և փոխադարձ կապերին նվիրված հանգամանալից աշխատությունում, բազմաթիվ օրինակների բաղդատման միջոցով նա եզրակացնում է. «Մենք խոսում ենք վաղ միջնադարյան հայկական և վրացական ճարտարապետության ընդհանրության, սակայն ոչ ամենևին նրանց լիովին համընկնման և առանձնահատկությունների բացակայության մասին։ Գոյություն են ունեցել նաև ճարտարապետական այնպիսի հորինվածքներ, որոնք ընդունված են եղել վրացի ճարտարապետների, սակայն չգիտես ինչու՝ մերժված հայ շինարարների կողմից (որպես օրինակ նշում է Սինոծմինդայի բազմախորան-բազմախորշ տաճարի օրինակը—Վ. Հ.)։ Ընդհակառակը,—շարունակում է նա,—կարելի է նշել հորինվածքներ, որոնք հայտնի են Հայաստանում, բայց անհայտ են Վրաստանում» (նշում է Դվինի Ս. Գրիգոր և Թալինի Եռաբսիդ գմբեթավոր բազիլիկները—Վ. Հ.)։ Նույնպիսի երևույթներ նա նշում է Հայաստանի և Վրաստանի ճարտարապետության զարգացման հաջորդ փուլերում ու եզրակացնում. «Երկու երկրների ճարտարապետական միջավայրներում գոյություն են ունեցել ստեղծագործական սկզբունքների առանձնահատկություններ, սակայն դա ամենևին չի բացասում ստեղծագործական ընդհանուր գծի առկայությունը»։

Նույն կարգի է Ա. Յակոբսոնի անգրադարձը կովկասյան Աղվանքի և Հայաստանի ճարտարապետական կապերի հարցում։ Կիրառված համեմատական հետազոտության մեթոդը հեղինակին բերում է մի եզրակացման, ըստ որի «...բերված նյութերի վերլուծությունը տարակույս չի թողնում, որ Աղվանքի վաղ միջնադարյան ճարտարապետության կազմավորման հարցում առավելապես նշանակալից է եղել հայկական ճարտարապետության դերը, հանգամանք, որն իր բարերար բացատրությունն է գտնում ոչ միայն երկու երկրների՝ ժամանակակից պատմիչների կողմից վկայած տնտեսական և քաղաքական սերտ կապերում, այլև Աղվանքի եկեղեցու՝ հայկական եկեղեցուց կախված լինելու հանգամանքում»։

Գիտական դրականության մեջ առանձին դեպքերում առաջ են քաշված հայ-սելջուկյան ճարտարապետության առնչությունների, մեկի նկատմամբ մյուսի ազդեցության վիճահարույց հարցերը։ Ժամանակին դրանց անդրադարձել են Ն. Մառն ու Հ. Օրբելին, նշելով, որ Փոքր Ասիայում գտնվող սելջուկյան մի քանի հուշարձանների կառուցողները հայ ճարտարապետներ են եղել։ Օրինակ՝ Կոնիայի մզկիթը (1271 թ.) կառուցել է հայ ճարտարապետ Գալուստը, Սվազի (Սեբաստիայի) Մեդրեսեն՝ (կառուցված 1247 թ. կամ վերակառուցման ենթարկված 1273—1274 թթ.) կառուցել է հայ ճարտարապետ Թագավորը (որոնց անունները՝ հիշատակված են նշված հուշարձանների վրա եղած արաբերեն արձանագրություններում) և այլն։

Ա. Յակոբսոնը Փոքր Ասիայում կառուցված մի քանի կարևոր հուշարձանների օրինակներով Էրզրումի, Ախլաթի, Ոստանի սելջուկյան դամբարանների ճարտարապետությունը որակում է որպես հայկական եկեղեցու գմբեթի թմբուկն ու վեղարը գետնին դրվածներ (այսինքն՝ անմիջական փոխառությունների օրինակներ)։ Այդ փաստերի հիման վրա նա գալիս է այն անհերքելի եզրակացությանը, ըստ որի «սելջուկյան» «մոնումենտալ ճարտարապետության ձևերն ու բուն ոճն ըստ երևույթին մեծապես պարտական են հայկական ճարտարապետությանն ու դրա ստեղծողներին»։

Երկար ժամանակ վիճահարույց է եղել նաև բյուզանդական և կովկասյան (այդ թվում՝ հայկական) քրիստոնեական ճարտարապետության փոխառնչությունների հարցը։ Հայտնի է, որ արևմտաեվրոպական մի քանի պատմաբան-արվեստագետներ՝ Շ. Դիլը, Ռ. Հաուպտհայմերը, Նույնիսկ Արմեն Խաչատրյանը (հավանաբար իր ղեկավարի՝ Անդրե Գրաբարի թելադրանքով), հայկական ճարտարապետությունը դիտել են որպես բյուզանդական, մասնավորապես՝ Կոստանդնուպոլսի դպրոցի ճարտարապետության մի ճյուղը, նրա գավառական տարբերակը։ Հայտնի է նաև, որ այդ սխալ տեսակետի վճռական ժխտմամբ ժամանակին հանդես են եկել հայ ճարտարապետության գիտական պատմության հիմնադիրներ Թ. Թորամանյանը և Յ. Ստրժիգովսկին։

Անդրադառնալով այդ հարցին, Ա. Յակոբսոնն իր «Հայաստանի և Բյուզանդիայի վաղ միջնադարյան ճարտարապետության առնչությունները» աշխատությունում ներգրավելով մի շարք նոր տվյալներ, եզրահանգում է. «Հայ միջնադարյան ճարտարապետության կազմավորման գործընթացը մի բարդ ուղի է. մշակութային սերտ կապեր են հաստատված եղել Հայաստանի և հարևան երկրների միջև։ Չի կարելի ընդունել արևմտաեվրոպական մի շարք հետազոտողների կարծիքն այն մասին, որ հայկական միջնադարյան ճարտարապետական մշակույթը ոչ այլ ինչ է, քան բյուզանդական ճարտարապետության տարբերակը, նրա արևելյան դպրոցներից մեկը կամ բյուզանդական մշակույթի գավառական դրսևորման արգասիք։ Միևնույն կրոնի՝ քրիստոնեության հիման վրա առաջացած մի շարք ընդհանրությունները, հորինվածքային ձևերի նման գծերը բնավ չեն որոշում Հայաստանի և Բյուզանդիայի ճարտարապետական արվեստի ընդհանուր դեմքը»։

Հայ ճարտարապետությունն ունի շատ բարեկամներ։ Հետազոտողների թիվը ի հաշիվ իտալացի, ֆրանսիացի, գերմանացի ու այլ ազգությունների պատկանող գիտնականների վերջին տասնամյակների ընթացքում զգալի ավելացել է։ Նրանց ջանքերով հայ ժողովրդի ճարտարապետական հարուստ ժառանգության վերաբերյալ ստեղծվել է մի ստվար մատենաշար։

Յավոք, եղել են նաև հատ ու կենտ գիտնականներ, որոնք հանդես են եկել հայ ճարտարապետության զարգացման փուլերում ստեղծված կարևորագույն հուշարձանների կառուցման ժամանակի քմահաճ վերանայմամբ, կամ նույնիսկ հայկական ճարտարապետության մի ամբողջ դպրոցի ազգային պատկանելությունը վերանայելու անհիմն միտումով։ Այդ կարգի ոտնձգությունների դեմ հանդես է եկել Ա. Յակոբսոնն ու գիտական հավաստի տվյալներով վճռականորեն հերքել հայ ճարտարապետության իրական պատմության նենգափոխման փորձերը։ Վրաց ակադեմիկոս Գ. Չուբինաշվիլին, որը հայտնի է հայ ճարտարապետության գնահատման իր անընդունելի չափանիշներով, 1967 թ. լույս ընծայեց «Հետազոտություններ հայկական ճարտարապետության մասին» մի ստվար մենագրություն։ Սա ամբողջապես հագեցած է վաղ միջնադարյան հայկական ճարտարապետության քմահաճ դիտարկումներով, մի քանիսի կառուցման թվագրությունների կողմնակալ վերանայմամբ ու ստորացուցիչ պիտակավորմամբ[1]։

Հայկական հուշարձանների մի խումբ, որոնք զուգահեռներ ունեն վրացականի հետ ու թվագրություններով հավաստի են, Գ. Չուբինաշվիլին որակում է որպես վրացական ճարտարապետության ազդեցության կրողներ, իսկ մի քանի հուշարձաններ՝ Արուճ, Թալինի մեծ տաճար և այլն, նա VII դարից անհիմն փոխադրում է IX—X դարեր (երբ այդպիսի տիպերը հայկականի ազդեցությամբ հանդես են գալիս նաև Վրաստանում)։

Հայտնի է, որ Ա. Յակոբսոնն իր հետազոտությունների ոլորան է ընդգրկել հայկական արվեստի այնպիսի զուտ ազգային բնագավառը, ինչպիսին խաչքարերն են։ Դրանց է նվիրված նրա սկզբում ամփոփ հոդվածը՝ լույս տեսած «Պատմա-ազգագրական հանդեսում» 1978 թ., ապա նաև ֆունդամենտալ մենագրությունը (Երևան, 1986 թ.)։ Հայտնի է նաև, որ հայ ճարտարապետության այդ նվիրյալ հետազոտողի տեսադաշտում են գտնվել նաև պատմական Արցախի հուշարձանները, մասնավորապես՝ հայ ճարտարապետության գլուխգործոցներից մեկը՝ Գանձասարի վանքը, որտեղ այցելել է երեք անգամ։ Դրան է նվիրված Ա. Յակոբսոնի «Հայ միջնադարյան ճարտարապետության պատմությունից (Գանձասարի վանք, XIII դ.)» հոդվածը, որը լույս է տեսել 1960 և 1977 թթ.։

---

1 Գ. Ն. Չուբինաշվիլու այդ մենագրության դեմ լույս տեսավ ընդարձակ գրախոսություն (տե՛ս Б. Н. Аракелян, В. М. Арутюнян, С. Х. Мнацаканян. О некоторых вопросах истории армянской архитектуры (по поводу книги Г. Н. Чубинашвили «Разыскания по армянской архитектуре»), Ереван, 1969).

Հայ ճարտարապետության և արվեստի գնահատման ուղղությամբ ոտրնձգություններ եղան, այս անգամ Ադրբեջանի վայ-գիտնականների կողմից. Ռ. Ռ. Գեյուշևը ջանում էր ապացուցել անապացուցելին՝ Գանձասարի վանքը համարելով ոչ թե հայկական, այլ աղվանական։ Իսկ Դ. Ա. և Մ. Դ. Ախունդովները հայկական խաչքարերի ծագումը նույնպես աղվանական համարեցին։ Ինչ խոսք, որ դրանց հեղինակների միտումնավորությունն ապացուցող ելույթները չէին կարող շարժանանալ վճռական քննագատության։ Հայ ժողովրդի պատմության և նյութական մշակույթի ու արվեստի պատմության մասնագետները (Մ. Հասրաթյանը, տողերիս հեղինակը և ուրիշներ) գրքերով ու հոդվածներով հանդես եկան կեղծարարների դեմ։ Երկու անգամ հայերեն (1980, երկրորդ անգամ ավելի ծավալուն՝ 1985 թ.) և ապա ռուսերեն (1988 թ.) լույս տեսավ Շ. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» գիտահանրամատչելի մենագրությունը։ Մեծապես օգտակար եղան վիմագրագետ Սեգրակ Բարխուդարյանի կողմից Լեռնային Ղարաբաղում խնամքով հավաքած ու հրատարակած վիմական արձանագրությունները[3]։

Անմասն չմնաց հայ արվեստի և ճարտարապետության պատմության լայնատեղյակ Ա. Յակոբսոնը։ Վկայակոչելով պատմամատենագրական հավաստի աղբյուրները, նախ հիշեցնում է, որ պատմական Աղվանքի, որպես պետական կազմավորման գոյությունը դադարում է VII դարում, երբ արաբները ներխուժում են Անդրկովկաս։ Վաղ միջնադարում (V—VII դդ.) աղվանական եկեղեցին կապված էր հայկականի հետ, դրանցում արարողությունները կատարվում էին հայերեն։

Ռ. Գեյուշևն ու Ախունդովները անհիմն կերպով Գանձասարի տաճարը հայտարարում են աղվանական, առանց հաշվի առնելու դրա մասին եղած պատմամատենագրական ու վիմագրական հավաստի տվյալները, նաև հատակագծային, ծավալատարածական հորինվածքներն ու ճարտարապետա-գեղարվեստական տիպիկ հայկական հատկանիշները։ Ըստ տողերիս հեղինակի կատարած հետազոտությունների, տաճարի արտաքին չափերն ու հատակագծային հորինվածքը ճշտությամբ կրկնում են Հաղբատի վանքի Ս. Նշան գլխավոր եկեղեցու նույնպիսի հատկանիշները։ Դրա պատճառները բացահայտված են «Հաստաբուն կաղնու ճյուղերից մեկը» մեր հոդվածում[4]։

Ա. Յակոբսոնը ավելորդ է համարել անդրադառնալ Գանձասարի տաճարի աղգային պատկանելության հարցին, քանի որ հիմնավոր կերպով դա կատարել է Գանձասարի վանքին նվիրված վերը նշված իր աշխատությունում։ Խաչենի նահանգի իշխան Հասան-Ջալալի 1216—1238 թթ. կառուցած վանքային համալիրը ի սկզբանե հայկական է եղել, մինչև XIX դարը հանդիսացել Արցախ աշխարհի հայության հոգևոր ու ազգային-ազատագրական պայքարի կազմակերպման նշանավոր կենտրոնը։ Ա. Յակոբսոնի նպատակն է եղել ցույց տալ տաճարի քանդակների իմաստային մեկնաբանման կատարյալ անհեթեթությունները։ Հանգամանորեն ու խորը իմացությամբ նա քննարկում է տաճարի թմբուկում տեղ գտած բարձրաքանդակների ու հարդարանքի պատկերագրական բովանդակությունը, պատերին ագուցված խաչքարերի զարդարվեստը, վկայակոչում է Հայաստանի այլ հուշարձաններում (Նորավանք, Գեղարդավանք և այլն) զուգահեռները, լիովին հերքում է Ախունդովների առաջ քաշած միտումնավոր դրույթները։

«Ախունդովների ելույթը,—նշում է Ա. Յակոբսոնը,—լի է բազմազան հեր-

---

2 Տե՛ս Р. Б. Геюшев. О конфессионально-этнической принадлежности Гандзасарского монастыря.—Сб. мат. культуры Азербайджана. 1973; Давид Ахундов Мурад Ахундов. Культовая символика и картина мира, запечатленная в храмах Кавказской Албании. Тбилиси, 1983.

3 Տե՛ս Ս. Բարխուդարյան. Դիվան հայ վիմագրության, գրքույկ V, Արցախ. Երևան, 1982։

4 «Գիտություն և տեխնիկա», 1989, № 8։

յուրանքներով, միհրական մշուշը պատում է ավետարանիչների՝ քրիստոնեական պատկերագրության մեջ սովորական դարձած սիմվոլները, որոնք հեղինակները, չգիտես ինչու, մեկնաբանում են որպես «միհրական-քրիստոնեական պատկերացումների սինթեզ»։ Գանձասարի վանքի բարձրաքանդակներին միանգամայն կամայականորեն միհրական իմաստ է տրված։ Նորավանքի XIV դարի խաչքարերը (որոնք նույնքան կամայականորեն կորցրել են իրենց հայկական անվանումը և կոչվում են խաչդաշներ), զարդանախշերից ելնելով, մեկնաբանվում են որպես ադրբեջանական արվեստի հուշարձաններ, թեև խաչքարերի բուսական հարդարանքը (երկրաչափականի հետ զուգակցված) բնորոշ է հենց հայկական արվեստին, իսկ Ադրբեջանի զարդանախշը, ընդհուպ մինչև XV դարը եղել է բացառապես երկրաչափական։ Ախունդովների ձրգտումը ծայրահեղորեն միտումնավոր է և նպատակամղված է ապակողմնորոշել ընթերցողներին»,—եզրակացնում է Ա. Յակոբսոնը[5]։

Ընդհանուր գծերով այսպիսին է հայ ճարտարապետության պատմության հարցերին նվիրված նրա ծանրակշիռ գիտական ժառանգությունը։ Յավոք, հիվանդության պատճառով նա այլևս հնարավորություն չունեցավ այցելել Հայաստան, սակայն մշտապես, մինչև իր կյանքի վերջը (1984 թ. օգոստոսի 7) մնաց հայ ժողովրդի ու նրա մշակույթի անդավաճան բարեկամը։ Ի գնահատումն հայ ճարտարապետության և արվեստի ուսումնասիրման ուղղությամբ կատարված գիտական նեղրման, Ա. Յակոբսոնն իր ծննդյան 75-ամյակի առթիվ (1981 թ.) պարգևատրվեց Հայկական ՍՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով։

АНАТОЛИЙ ЯКОБСОН
Подвижник армянской архитектуры

Академик НАН РА В. М. АРУТЮНЯН

Резюме

Анатолий Леопольдович Якобсон внес весомый вклад в исследование истории армянского зодчества. Он впервые посетил Армению в 1929 г., в составе археологической экспедиции, возглавляемой И. А. Орбели, а в 1934 г. принимал участие в раскопках крепости Апберд. В результате самостоятельных исследовательских поездок по Армении А. Л. Якобсон опубликовал серию обстоятельных научных трудов, посвященных монастырским комплексам Татева, Агарцина, Сагмосаванка, Нор-Гетика, Гандзасара, Хоракерта, Мшкаванка и церквей в Бюракане, армянским памятникам в Крыму. В 1950 г. вышла в свет монография «Очерк истории зодчества Армении V—XVIII вв.», в которой вторым после Н. М. Токарского выступил с изложением картины общего процесса развития армянской средневековой архитектуры. Особое место занимает изучение А. Л. Якобсоном проблем закономерностей во взаимосвязях зодчеств Сирии—Армении, Армении—Грузии, Армении—Кавказской Албании, Византии—Армении и Грузии, вклада армянских зодчих в становление «сельджукского стиля». Обладая широкими научными познаниями в вопросах истории архитектуры и искусства Закавказья и сопредельных стран, А. Л. Якобсон неоднократно обстоятельно выступал против попыток отдельных грузинских и азербайджанских исследователей исказить историю армянской архитектуры.

---

5 *Տե՛ս նրա* Гандзасарский монастырь и хачкары, факты и вымыслы.— *«Պատմա-բանասիրական հանդես», 1984, № 2, էջ 152։*